

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՈՒՆԵՐԻ ԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍԱՍՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ , ԴԱՎԻԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով քրեական վարույթների անջատման գործնական խնդիրների ուսումնասիրմանը: Հիմնվելով իրավաբանական գրականության մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների վրա՝ արձանագրվում է, որ քրեական վարույթների միացման և անջատման ինստիտուտը չի կարելի դիտարկել որպես զուտ տեխնիկական այն միջոցներից մեկը, որոնց օգնությամբ իրավակիրառողը կարող է փոփոխել, այսինքն՝ ընդլայնել կամ հակառակը՝ նեղացնել իր վարույթում գտնվող գործով հետազոտման առարկան: Ավելին, նշված ինստիտուտի կիրառումը պահանջում է խորքային և կշռադատված մոտեցում, քանի որ դրանով կարգավորվող իրավահարաբերությունների համալիրը անմիջականորեն կապված է ամբողջ քրեական դատավարության հիմնական, սկզբունքային դրույթների և ընդհանուր առմամբ քրեական դատավարության առջև դրված խնդիրների հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա կիրառումը հետապնդում է բոլորովին այլ նպատակ, որը չի բխում քրեական վարույթների անջատման ինստիտուտի էությունից: Քրեական վարույթների անջատման առկա իրավական պրակտիկան

Սամվել Դիլբանդյան – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ

Самвел Дилбандян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики юридического факультета ЕГУ

Samvel Dilbandyan – Doctor of Law, Professor, Head at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics
Էլ. փոստ՝ iravdilbandyan@gmail.com <https://orcid.org/0000-0001-6494-2791>

Դավիթ Մելքոնյան – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Давид Мелконян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

David Melkonyan – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Criminal Procedure and Criminology

Էլ. փոստ՝ melkd@yahoo.com <https://orcid.org/0000-0001-9993-6404>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.01.2025

Գրախոսվել է՝ 07.05.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում քրեական հետապնդման ժամկետների ամրագրմամբ: Եթե քրեական վարույթով մեղադրյալները մի քանիսն են, և նրանց մեղսագրվում են տարբեր ծանրության հանցագործություններ, ապա վարույթն իրականացնող մարմինը դատաքնության ժամկետները չխախտելու համար, սակայն, միևնույն ժամանակ խախտելով քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը, անջատում է առանձին վարույթ և փոխանցում դատարան: Այս պրակտիկան հակասում է վարույթի անջատման ինստիտուտի իմաստին և խախտում մեղադրյալի սահմանադրական իրավունքները:

Բանալի բառեր – վարույթի անջատում, քրեական հետապնդման ժամկետներ, անմեղության կանխավարկած, անաչառ դատարան, մեղադրանք, հանցագործության ծանրության աստիճան, առանձին վարույթ, ՄԻԵԴ պրակտիկա, Վճռաբեկ դատարանի պրակտիկա, իրավակիրառական պրակտիկա

Ներածություն

Քրեական վարույթների անջատման ինստիտուտի օրենսդրական կարգավորման և գործնական կիրառման հարցերը իրավաբանական գրականության մեջ մշտապես քննարկվել և ներկայումս էլ շարունակում են քննարկվել¹: Քրեական վարույթների միացման և անջատման ինստիտուտը ավանդաբար դասվել և դասվում է իրավական այն միջոցների շարքին, որոնք ուղղված են քրեական դատավարության նպատակների կենսագործմանը, ավելի ստույգ՝ անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ արդյունավետ վարույթի իրականացման ապահովմանը:

Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն տեսակետ է արտահայտվել, որ քրեական վարույթների միացման և անջատման ինստիտուտը չի կարող դիտարկվել որպես տեխնիկական միջոց, որի օգնությամբ իրավապահ մարմինը կարողանում է փոխել, այսինքն՝ նվազեցնել կամ ընդլայնել քրեական վարույթի հետազոտության առարկան: Ընդհակառակը, այս ինստիտուտի կիրառումը պահանջում է խորը և մտածված մոտեցում, քանի որ դրա միջոցով կարգավորվող իրավահարաբերությունները անմիջականորեն կապված են ամբողջ քրեական դատավարության հիմնական սկզբունքային դրույթների և քրեական դատավարության առջև դրված խնդիրների հետ²: Պատահա-

¹ Այդ մասին տե՛ս **Татьянина, Л. Г.** Выделение и соединение уголовных дел на предварительном слушании // Экономика и право, 2020, Т. 30, вып. 3, էջեր 445-449; **Ретюнских, И. А.** Современные проблемы соединения и выделения уголовных дел. Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями. Материалы пятнадцатой международной научно-практической конференции, часть 1, Барнаул 2017, էջեր 146-147; **Рязанцев, В. А.** Процессуальный порядок выделения уголовного дела и материалов в стадии предварительного расследования // Научный портал МВД России, № 3, 2014, էջեր 24-28:

² Տե՛ս **Кадацкий, С.Н.** Соединение и выделение уголовных дел в стадии предварительного расследования: Дисс. ... канд. юрид. наук. – Караганда, 2009, էջ 148:

կան չէ, որ որոշ պետությունների քրեադատավարական օրենսգրքեր վարույթների անհիմն անջատումը գնահատում են որպես վարույթը խոչընդոտող հանգամանք և անգամ հնարավորություն են նախատեսում դատական քննության փուլում գտնվող վարույթը վերադարձնելու դատախազին՝ վարույթների միացման հարցը լուծելու³:

Հետազոտական մաս

Քրեական վարույթների (քրեական գործերի) անջատման ինստիտուտը նախատեսված էր 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 28), այն նախատեսվեց նաև 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 10): Թեև քրեական վարույթների անջատման դատավարական կարգը սահմանող իրավադրույթները բովանդակային առումով էականորեն չեն տարբերվում, սակայն նոր օրենսգրքում, հաշվի առնելով Եվրոպական դատարանի իրավաբանությունը, որոշակիացվել և հստակ ամրագրվել են նոր վարույթ անջատելու շարժառիթը, ինչպես նաև այն ստուգանիշը, որը թույլ կտա գնահատել դրա իրավաչափությունը⁴:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող վարույթից կարող է անջատվել նոր վարույթ, եթե դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա»*:

Ինչպես երևում է վերոգրյալից, մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակից անձանց նկատմամբ քրեական գործից մաս անջատելը քննիչի, դատախազի կամ դատարանի հայեցողական լիազորության տիրույթում է, սակայն յուրաքանչյուր դեպքում նման որոշում կայացնելիս նրանք պետք է հիմնավորեն, որ

1. դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և,

2. դա չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի վերոգրյալ կանոնի կիրառմամբ գործից մաս անջատելու և այն առանձին քննելու դրույթը սերտորեն փոխկապված է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մի

³ Տե՛ս ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի համակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 39:

շարք հիմնարար դրույթների հետ, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի, *res judicata* (իրավական որոշակիության) և *non bis in idem* (կրկին դատվելու անթույլատրելիության) սկզբունքների, մեղադրանքի կառուցվածքին և մեղադրական եզրակացությանը ներկայացվող պահանջների, դատական քննության առարկայի ու սահմանների և դրանով պայմանավորված՝ դատավճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերի հետ, ուստի յուրաքանչյուր դեպքում մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակից անձանց նկատմամբ քրեական գործից մաս անջատելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել նաև այդ դրույթների պահանջները, որպեսզի դրանք չխախտվեն, ու դրանով չվտանգվի դատավարության արդարությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածն իմպերատիվ կերպով սահմանում է. «Առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքով»: Այն որոշվում է նախաքննության մարմնի կողմից 202-րդ հոդվածին համապատասխան կազմած և դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ, իսկ նույն օրենսգրքի 347-րդ և 348-րդ հոդվածներից բխում է, որ դատավճիռը կայացվում է կոնկրետ մեղադրյալի նկատմամբ և հենց նրան առաջադրված մեղադրանքի կապակցությամբ:

Այս կանոններից շեղումները և մասնավորապես անջատված գործով կամ մայր վարույթով դատի չտրված անձանց անհատականացնող տվյալները և նրանց վերագրվող արարքները դատի տրված ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում նկարագրելու, դրանք դատական քննության առարկա դարձնելու և դատական ակտում դրանք հաստատելու դեպքում կխախտվեն այդ անձանց անմեղության կանխավարկածի սկզբունքը, պաշտպանության իրավունքը և այլն, չհաշված, որ դատարանը փաստացի դուրս կգա դատական քննության սահմաններից:

Ասվածը հիմնված է ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների վրա և բխում է դրանցից: Անդրադառնալով դատական քննության սահմանների կարևորության և այն որոշող դատավարական փաստաթղթերի հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Ս. Նալբանդյանի* գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրական եզրակացությունը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա գործողությունների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները: Մեղադրական եզրակացության նշանակույթ-

յունն արտահայտվում է նաև նրանում, որ այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում»⁵:

Մեկ այլ՝ *Ա. Պապյանի* գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) մեղադրական եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր (արարքի փաստական նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, դատակոչի ենթակա անձանց շրջանակը և այլն) էական նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար»⁶:

Մեկ ուրիշ՝ *Գ. Ճաղարյանի* և այլոց վերաբերյալ 2012 թվականի օգոստոսի 24-ի ԵՇԴ/0002/01/11 որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «Պաշտպանության իրավունքը՝ որպես մեղադրյալին վերապահված դատավարական իրավունքների ամբողջություն, հնարավորություն է տալիս վերջինիս հանդես գալու դատավարության ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակով, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն մեղսագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում՝ պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը: Մրցակցության սկզբունքը և պաշտպանության իրավունքը կոչված են դատավարությունը համապատասխանեցնելու արդարության չափորոշիչներին և ապահովելու իրավունքների արդյունավետ վերականգնում, իսկ քրեական արդարադատության շրջանակներում վերագրյալն առնվազն ենթադրում է տեղի ունեցած հանցագործության մանրամասների հաստատումը, դրանց ճշգրիտ իրավաբանական գնահատական տալը, հասարակությանը և առանձին անհատներին հասցված վնասի, ինչպես նաև հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի իրական մեղքի ամբողջական բացահայտումը: (...) Մրցակցային դատավարության ընթացքում պաշտպանությունը հանդես է գալիս որպես մեղադրանքի հակադրում՝ նպատակ ունենալով հերքել այն և պաշտպանել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման մեջ մեղադրվող անձանց իրավունքներն ու շահերը: Այս կարևորագույն գործառնության արդյունավետ իրականացման համար պաշտպանության կողմն առնվազն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերին, դրանց վերաբերյալ ներկայացնելու սեփական դիրքորոշումը և մասնակցելու ապացուցման գործընթացին»:

⁵ Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԴՂ2/0144/01/09 որոշման 24-րդ կետ:

⁶ Արկադի Պատվակյանի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 19-րդ կետ:

Ա. Աբրահամյանի գործով դատարանը նշել է. «(...) [Դ]ատական քննությունը, լինելով քրեական դատավարության փուլային համակարգի վճռորոշ փուլ, միտված է մեղադրանքի հիմքում դրված ապացույցների հետազոտման արդյունքում պատասխան տալ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցին: Այլ խոսքով՝ դատական քննության առարկան իրավական վեճն է պետության (տուժողի) և ամբաստանյալի միջև, որը պետք է լուծվի քրեական դատավարության մի շարք սկզբունքների, այդ թվում՝ մրցակցության սկզբունքի պահպանմամբ: Մրցակցային դատավարությունը նախնառաջ ենթադրում է, որ մեղադրանքի և պաշտպանության գործառույթները տարանջատված և սահմանազատված են գործի լուծման գործառույթից: Քրեական գործը պետք է լուծվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից, որը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: (...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ քննող դատարանի խնդիրն անձին (անձանց) ներկայացված մեղադրանքի օրինականության և հիմնավորվածության ստուգումն է: Գործի քննությունը դատարանում իրականացվում է մեղադրանքի հիման վրա և դրա հիմքում դրված ապացույցների շուրջ (...)»⁷:

2011 թ. փետրվարի 4-ի ՍԴՈ-934 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «[Ս]ահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որը նրան առաջադրվել է մինչդատական վարույթում (...)»:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունից հստակ երևում է, որ գործի քննությունը դատարանում իրականացվում է բացառապես այն անձի (in personam) նկատմամբ, ում վերաբերյալ դատարանը որոշում է կայացրել դատական քննություն նշանակելու մասին, այսինքն՝ ամբաստանյալի նկատմամբ և մեղադրական եզրակացության մեջ նրան վերագրվող մեղադրանքի սահմաններում, կոնկրետ նրան վերագրվող փաստերով (in rem) և դրան տրված քրեաիրավական որակման շրջանակներում, ինչպես նաև մեղադրանքի հիմքում դրված ապացույցների շուրջ:

Այլ կերպ՝ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը կոնկրետ գործով դատական քննության առարկան է և դատի տրված ամբաստանյալի հետ ընդգծում է կոնկրետ քրեական գործով դատական քննության սահմանները և դրանով պայմանավորված՝ դատարանի իրավասության շրջանակները, ինչը

⁷ Արմեն Մարտիրոսի Աբրահամյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԼԴ/0178/01/12 որոշման 19-20-րդ կետեր):

նշանակում է, որ յուրաքանչյուր գործով դատարանի գործողություններն ու որոշումները պետք է համաչափ լինեն դատական քննության սահմաններին, որպիսի պայմաններում դատարանը պարտավոր է դատական քննության ընթացքում հեռացնել կամ արգելել (չթույլատրել) այն ամենը, ինչը վերաբերելի չէ դատական քննության առարկային և դուրս է դատական քննության սահմաններից: Հետևաբար՝ դատարանում չեն կարող հետազոտվել այնպիսի ապացույցներ, որոնք վերաբերում են դատի չտրված այլ անձանց և նրանց վերագրվող մեղադրանքներին, քանի որ դատավճիռը ևս կայացվում է բացառապես դատի տրված ամբաստանյալի վերաբերյալ. դատարանը չի կարող դատավճռում անդրադառնալ և գնահատել այն անձանց արարքները, ովքեր դատի չեն տրվել, որպեսզի չխախտի նաև այդ անձանց իրավունքները, որոնց դատարանը դեռ պետք է անդրադառնա:

Ճիշտ է, թեև կան մի քանի անձանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ վարույթներով իրավիճակներ, երբ կարող է անհրաժեշտություն առաջանալ նրանցից որևէ մեկի կամ մի քանիսի վերաբերյալ քրեական վարույթից մաս անջատել և առանձին քննել կամ դատարան ուղարկել (օրինակ, երբ խմբի անդամը գտնվում է հետախուզման մեջ կամ հայտնի չէ կամ այնպիսի ծանր հիվանդությամբ է տառապում, որ երկար ժամանակ է պահանջվելու նրա ապաքինվելու համար և այլն, որպիսի պայմաններում մյուս մեղադրյալի (մեղադրյալների) իրավունքները կխախտվեն, եթե գործը վերջնական լուծում չստանա, հատկապես, եթե նա գտնվում է կալանքի տակ), որի համար էլ հենց նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կանոնը: Սակայն, միանշանակ է, և դա բխում է նաև նույն 10-րդ հոդվածից, որ այդ դեպքերը պետք է լինեն բացառություն, այլ ոչ թե կանոն, ընդ որում՝ յուրաքանչյուր նման որոշում պետք է լինի հստակ հիմնավորված և պատճառաբանված, այսինքն, բացի գործի քննության լրիվության և օբյեկտիվության պահանջից, գործից մաս անջատելու դեպքում պետք է հաշվի առնվեն բոլոր մրցակցող շահերը:

Այլ կերպ ասած՝ քրեական վարույթից մաս անջատելու և դատարան ուղարկելու դեպքում պետք է պահպանվեն որոշ սկզբունքային կանոններ, մասնավորապես, նախաքննության մարմինը պետք է ձեռնպահ մնա տվյալ վարույթով դատի չտրված անձանց անհատականացնող տվյալները և նրանց արարքները նկարագրել դատարան ուղարկվող վարույթով մեղադրյալին առաջադրված մեղադրանքում, իսկ եթե դա անհնար է, քանի որ արարքի քրեաիրավական որակումը կամ այլ հանգամանք է դա պահանջում, ապա պետք է այնպես շարադրի այլ անձանց անհատականացնող տվյալները և նրանց գործողությունները, որպեսզի՝

նախ՝ դատարանը հնարավորություն ունենա իրականացնելու գործի հանգամանքների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն՝ առանց դուրս գալու դատական քննության սահմաններից և դրանով պայմանավորված ապացուցման սահմաններից,

երկրորդ՝ դատարանի կողմից կայացվող դատավճռով չկանխորոշվի առանձին քննվող վարույթի ելքը, չկանխորոշվեն դատի չտրված անձանց մեղավորությունը և այլ հանգամանքներ (փաստացի նախադատելիության ուժով), դատական քննության փուլում չխախտվեն նրանց պաշտպանության իրավունքը, անմեղության կանխավարկածը և այլն:

Հետևաբար, անընդունելի է հատկապես այն իրավիճակը, երբ մի քանի անձանց (այդ թվում նաև խմբի) կողմից կատարված ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, երբ դրա հիմքում փաստացի ընկած է նույն ապացուցողական զանգվածը, վարույթից մաս է անջատվում և ուղարկվում դատարան, իսկ մյուս մասով նախաքննությունը շարունակվում է, հատկապես, երբ ոչ միայն հայտնի են ենթադրյալ հանցանք կատարած անձինք, և չկա որևէ իրավական կամ տեխնիկական խոչընդոտ վարույթը դատարան ուղարկելու և համատեղ քննելու համար:

Նման իրավիճակներում դատի տրված ամբաստանյալի մեղադրանքը դատարանի կողմից հաստատելու կամ ապացուցված համարելու դեպքում խախտվում են անջատված մասով մեղադրյալների իրավունքները և, մասնավորապես, անմեղության կանխավարկածը, պաշտպանության իրավունքը և այլն, ինչպես նաև կանխորոշվում է անջատված մասով վարույթի ելքը՝ դատավճռի փաստացի նախադատելիության ուժով, ինչը վտանգում է նաև անջատված մասով հետազայում (կամ այդ պահին) գործը քննող դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը:

Նման հետևություններն ուղղակիորեն բխում են ՄԻԵԴ նախադեպային իրավունքից. օրինակ, Նավալնին և Օֆիցերովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2016 թվականի փետրվարի 23-ի վճռում (զանգաստներ 46632/13 28671/14) Եվրոպական դատարանը ՄԻԵԿ 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել իրավունքի տեսանկյունից նույնական փաստական հանգամանքներով գործով՝ նշելով հետևյալը. «(...) Դատարանը հնարավոր է համարում իրավիճակ, երբ խմբի մասնակցությամբ հանցագործությունների դեպքում, որոնց [խմբի անդամներին] հնարավոր չէ միաժամանակ դատի տալ նույն վարույթի շրջանակներում, ամբաստանյալի մեղավորության հարցը որոշելու համար անհրաժեշտություն առաջանա հանցագործության կատարմանն առնչություն ունենալու հիմքով հիշատակելու նաև երրորդ անձանց, որոնց պետք է հետազայում դատի տալ առանձին: Քրեական գործեր քննող դատարանները պարտավոր են մեղադրյալի իրավական պատասխանատվության հարցը որոշելու համար անհրաժեշտ գործի հանգամանքները հաստատել առավել լրիվ և ճշգրիտ և իրավունք չունեն իրենց կողմից հաստատված հանգամանքների մասին խոսել,

որպես պարզ ենթադրությունների կամ կասկածների: Դա վերաբերում է նաև այն հանգամանքներին, որոնք կապված են երրորդ անձանց հետ հանցակցությանը, սակայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է հիշատակել այդպիսի հանգամանքներ, ապա դատարանը պետք է ձեռնպահ մնա այնպիսի տեղեկություններ ներկայացնելուց, որոնք անհրաժեշտ չեն ամբաստանյալի մեղավորությունը որոշելու համար: Նույնիսկ, եթե օրենսդրությունը հստակ նշում է, որ անթույլատրելի է քրեական դատավարության արդյունքներում, որում անձը չի մասնակցել, նրա մեղավորության մասին հետևություններ անելը, միևնույնն է, դատական որոշումների տեքստերը ձևակերպելիս պետք է խուսափել երրորդ անձանց մեղավորության մասին հետևություններ անելուց, որպեսզի կասկածի տակ չդրվի այլ գործով դատավարության արդարությունը⁸:

(...)

Սույն գործով քրեական մեղադրանքը, որը ներկայացված է եղել դիմողներին, հիմնված է եղել այն նույն հանգամանքների վրա, ինչ X-ի վերաբերյալ մեղադրանքը, և երեքը մեղադրվել են հանցակցությամբ նույն գույքը հափշտակելու մեջ: Հետևաբար, կասկած չի հարուցում այն, որ X-ի վերաբերյալ գործով դատաքննության ընթացքում դատարանի կողմից հաստատված յուրաքանչյուր հանգամանք, ինչպես նաև իրավունքի վերաբերյալ դատարանի կողմից արված յուրաքանչյուր հետևություն, ուղղակիորեն կապված են դիմողների գործին: Տվյալ իրավիճակում անհրաժեշտ էր տրամադրել այնպիսի երաշխիքներ, որոնք կապահովեին, որ X-ի գործով վարույթի ընթացքում դատարանի կողմից ընդունված որոշումները և կիրառված միջոցներն անարդարացի չէին դարձնի հետագայում դիմողների գործի քննությունը: Դա հասկապես արդիական էր այն պատճառով, որ դիմողները դատավարական հնարավորություն չեն ունեցել որևէ կերպ մասնակցելու անջատված գործով վարույթին, քանի որ նրանց որևէ դատավարական կարգավիճակ չի տրվել անջատված գործով դատարանի կողմից կայացված որոշումները և արված հետևությունները վիճարկելու համար:

(...) Դատարանն իր պրակտիկայում արդեն իսկ ընդգծել է անձին տրվող դատավարական երաշխիքների առավել ակնհայտ և առաջնային կարևորությունն այն դեպքերում, երբ նույն գործով մեղադրյալները կանգնում են դատարանի առաջ տարբեր վարույթներով, մասնավորապես՝ դատարանների կողմից ձեռնպահ մնալ յուրաքանչյուր այնպիսի դատողությունից, որը կունենա նախադատելիություն հետագա վարույթի համար, եթե անգամ դրանք չունեն պարտադիր ուժ այլ դատարանների համար (Karaman, 42-43 և 64-56): Եթե առաջադրվող մեղադրանքի բնույթը չի թույլատրում դատարանին, որ անջատված գործի շրջանակներում կարողանա հետևություններ անել առանց երրորդ անձանց մասնակցության, և այդ հետևությունները կարող են ազդել երրորդ

⁸ Տե՛ս Կարաման (Karaman) ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, կետեր 64, 65:

անձանց իրավական պատասխանատվության հարցի որոշման վրա, որոնք առանձին են կանգնելու դատարանի առաջ, ապա այդ իրավիճակը պետք է դիտարկել որպես լուրջ խոչընդոտ գործից մասն առնալու համար: Ընդհանուր հանգամանքների տեսանկյունից սերտորեն փոխկապված գործերն առանձին վարույթներով քննելու վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է հիմնվի մրցակցող բոլոր շահերի մանրամասն վերլուծության վրա, և մյուս մեղադրյալներին պետք է հնարավորություն տրվի առարկելու գործն առանձին վարույթ առանձնացնելու հարցի վերաբերյալ (...):»:

Նույն վճռի 106-րդ կետում, անդրադառնալով ՌԴ ներպետական դատարանի կողմից դատական ակտում տրված ձևակերպումներին, ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալը. «Թեև դատարանը անջատված գործով չի կարող մեղավոր ճանաչել դատի չտրված անձանց, սակայն եթե գործի հանգամանքների մասին անի այնպիսի հետևություններ, որոնք կվերաբերեն հանցագործությանն այլ անձանց մասնակցությանը, ապա դրանով նախադատելիություն կստեղծի անջատված գործի համար, ինչը իրավունքի խախտում է»:

Ուշագրավ են հատկապես նույն վճռի 108-րդ կետում Դատարանի հետևությունները: Մասնավորապես, Դատարանը, համաձայն չլինելով Կառավարության այն առարկություններին, որ դիմողների գործով դատարանը պարտավոր էր հետազոտել բոլոր ապացույցները և հարցաքննել վկաներին և այդ գործով դատական ակտ կայացնելիս հիմք ընդունել բացառապես դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները, նշում է հետևյալը. «...այդուհանդերձ, Դատարանը գտնում է, որ իրար հետ փոխկապված գործերն առանձին վարույթով քննող դատարանները ակնհայտաբար հակված են եղել այն բանին, որ գործեն համաձայնեցված, քանի որ յուրաքանչյուր իրար հետ չհամաձայնեցված հետևություն նման գործերով կարող է կասկածի տակ դնել դատարանի կայացրած երկու դատավճիռների իրավաբանական ուժը: Դատարանը գտնում է, որ նման դեպքերում իրար հակասող դատավճիռներ կայացնելու ռիսկը նվազեցնում է դատավորների շահագրգռվածությունը բացահայտելու գործով ճշմարտությունը և դրանով իսկ սահմանափակում է նրանց կարողությունը իրականացնելու արդարադատություն, ինչը անլրացնելի վնաս է պատճառում դատարանի անկախությանն ու անկողմնակալությանը, ինչպես նաև, առավել լայն իմաստով նրա կարողությանը ապահովելու դատական քննության արդարությունը»:

Ինչպես երևում է վերոգրյալից, ՄԻԵԴ չափանիշները վերաբերում են ներպետական դատարանների կողմից համապատասխան պահանջները պահպանելուն, որպեսզի դատարանները դատական ակտ կայացնելիս այնպիսի ձևակերպումներ չտան, որոնք կունենան նախադատելիություն անջատված վարույթով, կասկածի տակ կդնեն անջատված գործով մեղադրվող անձանց անմեղության կանխավարկածը: Նախաքննության մարմինը վարույթից մասն առնալու, այնուհետև մեղադրական եզրակացություն կազմելիս, իսկ

հսկողություն իրականացնող դատախազը՝ մաս անջատելու որոշման օրինականությունը ստուգելիս, այնուհետև՝ մեղադրական եզրակացությունը հաստատելիս պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, թե արդյոք դատարանը հնարավորություն կունենա իրականացնելու օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն՝ առանց դուրս գալու դատական քննության սահմաններից և ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի կապակցությամբ կայացնելու օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատավճիռ, ինչպես նաև այն, թե արդյոք դատարանի գործունեության արդյունքում չեն վտանգվի առանձին քննվող վարույթով դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը արդեն իսկ կայացված դատավճռի նախադատելիության (փաստացի) պատճառով, չեն խախտվի դատի չտրված այլ մեղադրյալների անմեղության կանխավարկածը, պաշտպանության իրավունքը և այլն:

Նախաքննության մարմինը և դատախազը միևնույն փաստերը երկու ինքնուրույն վարույթների քննության առարկա դարձնելիս պետք է առաջնորդվեն նաև այն սկզբունքով, որ նույն անձանց վերագրվող նույն արարքները («նույն վարքագիծը», անկախ այն բանից, թե այդ վարքագիծն ինչպես է որակվում օրենքով (*idem factum*)) միաժամանակ երկու տարբեր վարույթների քննության առարկա չեն կարող լինել, քանի որ վարույթներից մեկը բացառում է մյուսին *res judicata* (իրավական որոշակիության) և *non bis in idem* (կրկին դատվելու անթույլատրելիության) սկզբունքների ուժով:

Այնուամենայնիվ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա կիրառման հիմքում դրվել է այլ՝ քրեական վարույթների անջատման ինստիտուտի էությունից չբխող նպատակ: Քրեական վարույթից մաս անջատելու իրավակիրառական սխալ պրակտիկան պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում քրեական հետապնդման ժամկետների նախատեսմամբ: Քրեական վարույթում մի քանի մեղադրյալների առկայության դեպքում, երբ նրանց վերագրվում է տարբեր ծանրության հանցանքների կատարում, վարույթն իրականացնող մարմինը դատավարական ժամկետները չխախտելու և շատ դեպքերում վարույթի ընթացքում իր դանդաղկոտությունը «քողարկելու» նպատակով գտել է պարզ, սակայն օրենքից չբխող լուծում, այն է՝ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ մասի անտեսմամբ՝ մաս անջատել և ուղարկել դատարան: Նման պրակտիկան ստեղծում է մի վիճակ, երբ այն բոլոր վարույթներով, որոնցով ծանրության տարբեր աստիճանի հանցանքների կատարման համար քրեական հետապնդում է հարուցված մի քանի մեղադրյալի նկատմամբ, հիմնական վարույթից կանջատվեն մասեր՝ խախտելով մեղադրյալների վերը հիշատակված սահմանադրական իրավունքները և իմաստագրկելով դատաքննությունն ընդհանրապես: Նման պրակտիկան վտանգավոր է իրավական անվտանգության տեսանկյունից, քանի որ արդ-

յունքում վտանգվում են ինչպես անջատված մասով մեղադրյալների անմեղության կանխավարկածը, *res judicata* (իրավական որոշակիության) և *non bis in idem* (կրկին դատվելու անթույլատրելիության) սկզբունքները, այնպես էլ դատարանի կողմից արդար դատաքննության իրացման հնարավորությունը:

Նման իրավիճակներում մի դատարանի կողմից կայացված դատական ակտը կանխորոշում է անջատված մասով վարույթի ելքը՝ վտանգելով դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը: Այսպիսի դեպքերում դատարանները կաշկանդված կլինեն միմյանց որոշումներով:

Եզրակացություն

Վերոգրյալի հիման վրա արձանագրում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կիրառման պրակտիկան չի համապատասխանում վարույթների անջատման ինստիտուտի էությանն ու նպատակին, վարույթից մաս անջատելը չի կարող վերածվել բացառապես տեխնիկական գործընթացի՝ պայմանավորված միմիայն քրեական հետապնդման ժամկետներով: Ընդհակառակը, վարույթից մաս անջատելու մասին որոշումը պետք է պայմանավորվի բացառապես արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

САМВЕЛ ДИЛБАНДЯН, ДАВИД МЕЛКОНЯН – *Практические вопросы выделения уголовных производств в уголовном судопроизводстве РА.* – Статья посвящена обсуждению практических вопросов выделения уголовного производства, предусмотренных новым УПК РА. В статье автор, опираясь на мнения выраженные в юридической литературе, решения Кассационного суда и Европейского суда, отмечает, что институт соединения и выделения уголовных производств нельзя рассматривать как одно из технических средств, с помощью которых правоприменительный орган в состоянии изменить, то есть уменьшить или увеличить предмет исследования по находящемуся в его производстве делу. Напротив, указанный институт требует при своем применении глубокого и вдумчивого подхода, так как комплекс регулируемых им правоотношений находится в непосредственной связи с основными, принципиальными положениями всего уголовного процесса и стоящими перед ним задачами.

Изучение практики применения статьи 10 УПК РА показывает, что ее применение преследует иную цель, не вытекающую из сущности института выделения уголовных производств. Существующая правовая практика выделения уголовного производства обусловлена закреплением в новом УПК сроков уголовного преследования. При наличии в уголовном процессе нескольких подсудимых, когда они обвиняются в совершении преступлений различной тяжести, орган, ведущий процесс, чтобы не нарушать сроки судебного разбирательства, нарушая статью 10 УПК выделяет отдельное производство и передает в суд. Такая практика противоречит смыслу института выделения производства и нарушает конституционные права обвиняемых.

Ключевые слова: *выделение производства, сроки уголовного преследования, презумпция невиновности, беспристрастный суд, обвинение, тяжесть преступления, отдельное производство, практика ЕСПЧ, практика Кассационного суда РА, правоприменительная практика*

SAMVEL DILBANDYAN, DAVID MELKONYAN – *Practical Issues of Detaching a New Criminal Case in the Criminal Proceedings of RA.*

– The article is devoted to a discussion of practical issues of detaching a new criminal case provided for by the new Code of Criminal Procedure of the Republic of Armenia. In the article, the author, relying on the opinions expressed in the legal literature, decisions of the Court of Cassation and the European Court, notes that the institution of combining and detaching criminal proceedings cannot be considered as one of the technical means by which the law enforcement agency is able to change, that is, reduce or increase the subject of research on the case in progress. On the contrary, this institution requires a deep and thoughtful approach in its application, since the complex of legal relations regulated by it is in direct connection with the basic, fundamental provisions of the entire criminal process and the tasks facing it.

A study of the practice of applying Article 10 of the RA Code of Criminal Procedure shows that its application pursues a different goal that does not follow from the essence of the institution of detaching criminal proceedings. The existing legal practice of detaching criminal proceedings is due to the stipulation in the new Code of Criminal Procedure of the terms of criminal prosecution. If there are several defendants, when they are accused of committing crimes of varying gravity, the body conducting the process, in order not to violate the deadlines for the prosecution, in violation of Article 10 of the Code of Criminal Procedure, separates a proceeding and transfers it to the court. This practice contradicts the meaning of the institution of separation of proceedings and violates the constitutional rights of the accused.

Key words: *separation of proceedings, terms of criminal prosecution, presumption of innocence, impartial court, criminal charge, gravity of the crime, separate proceedings, case law of the ECHR, case law of the Court of Cassation RA, law enforcement practice*

Գրականության և իրավական ակտերի ցանկ

Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 19-րդ կետ (Arkadi Patvakhani Papyani gortsov Vchrabek datarani 2010 tv. noyemberi 5-i tiv TD/0115/01/09 voroshman 19-rd ket).

Արմեն Մարտիրոսի Աբրահամյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԼԴ/0178/01/12 որոշման 19-20-րդ կետեր (Armen Martirosi Abrahamyan-i gortsov HH Vchrabek datarani 2014 tv. hoktemberi 31-i tiv LD/0178/01/12 voroshman 19-20-rd keter):

Կարամանն (Karaman) ընդդեմ Գերմանիայի գործով վճիռ (Case of Karaman v. Germany).

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի համակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022 (Hayastani Hanrapetutyan kreakan datavarutyan nor orensgrki hamakargayin lutsumneri, norarakan motetsumneri ev himnakan institutneri meknabman gortsakan ugetsuys, Yevropayi khoruhr, 2022).

ՌԴ քրեական դատավարության օրենսգիրք (RD kreakan datavarutyan orensgrki).

Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԲԴ2/0144/01/09 որոշման 24-րդ կետը (Suren Karoyi Nalbandyan-i gortsov Vchrabek datarani 2009 tv. dektemberi 18-i tiv HYKRD2/0144/01/09 voroshman 24-rd ket).

Кадацкий, С.Н. Соединение и выделение уголовных дел в стадии предварительного расследования: Дисс. ... канд. юрид. наук. – Караганда, 2009, էջ 148 (Kadatskii, S.N. Soedinenie i vydelenie ugovolnykh del v stadii predvaritelnogo rassledovaniya: Diss. ... kand. jurid. nauk. – Karaganda, 2009, ej. 148).

- Ретюнских, И. А. Современные проблемы соединения и выделения уголовных дел. Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями. Материалы пятнадцатой международной научно-практической конференции, часть 1, Барнаул 2017, էջեր 146-147 (Retyunskikh, I.A. Sovremennye problemy soedineniya i vydeleniya ugovnykh del. Aktual'nye problemy bor'by s prestupleniyami i inymi pravonarusheniyami. Materialy pyatnadsatoi mezhdunarodnoi nauchno-prakticheskoi konferentsii, chast 1, Barnaul 2017, ej. 146-147).
- Рязанцев, В. А. Процессуальный порядок выделения уголовного дела и материалов в стадии предварительного расследования. //Научный портал МВД России, № 3, 2014, էջեր 24-28 (Ryazantsev, V.A. Protsessualnyi poryadok vydeleniya ugovnogo dela i materialov v stadii predvaritelnogo rassledovaniya. //Nauchnyi portal MVD Rossii, No. 3, 2014, ej. 24-28).
- Татьянина, Л.Г. Выделение и соединение уголовных дел на предварительном слушании. // Экономика и право, 2020, Т. 30, вып. 3, էջեր 445-449 (Tatyanina, L.G. Vydelenie i soedinenie ugovnykh del na predvaritelnom slushanii. //Ekonomika i pravo, 2020, T. 30, vyp. 3, ej. 445-449).